



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«27» 09 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000074

Ձեռնարկողը՝

«Արմենիա Վայն Գործարան» ՍՊԸ
Ք. Երևան, Չկալովի 43

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Իսակովի պողոտա 11 հասցեում նախատեսվող կառուցապարման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000074

<27> 09 2019թ.

Երևան քաղաքի Իսակովի պողոտա 11 հասցեում նախատեսվող կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ «Արմենիա Վայն Գործարան» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան Կենտրոն վարչական շրջան

«Արմենիա Վայն Գործարան» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Իսակովի պողոտա 11 հասցեում հատկացված հողատարածքում կառուցել գրասենյակային շինություն, հանգստի կենտրոն և այգի:

Գրասենյակային շինության և հանգստի կենտրոնի նախագծման համար Երևանի քաղաքապետարանի կողմից տրվել է №01/18-07/1-Մ-5705-431 առ 27.05.2019թ. նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք): Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.251հա մակերեսով՝ հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0708-0025), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման: Իսակովի պողոտայի հակառակ կողմում գտնվում են Արարատյան մաքսատան մասնաշենքերը, անմիջապես տարածքի հարևանությամբ գտնվում է կիսակառուց հյուրանոցի շինությունը: Տարածքում առկա են շինություններ, որոնք ենթակա են քանդման՝ համաձայն 01/18-Մ-7665-57 04.07.2019թ. և 01/18-Մ-6221-46 06.06.2019թ. տրված թույլտվության (դիսպետչերական կետ՝ 62.7մ², վարչական շենք՝ 900.5մ², պոմպակայան՝ 36.0մ², ճաշարան՝ 259.7մ², պահակատուն՝ 4126.7մ², բենզալցակայան՝ 8.8մ², ավտոհանգրվան՝ 5.6 մ², ավտոհագրվանի արտաքին պանելների ապամոնտաժում՝ 22 հատ, պահակատուն՝ 12.6մ², լողավազան՝ 35.2մ²):



Համաձայն նախագծի կառուցվելու է 2 մասնաշենքից բաղկացած գրասենյակային շինություն՝ նախագծված 7 վերգետնյա և 1 նկուղային հարկերով: Շինությունների կառուցապատման մակերեսը՝ ըստ յուրաքանչյուր մասնաշենքի կազմում է 1350քմ և 2350քմ: Ընդհանուր կանաչապատման մակերեսը՝ 3580քմ, որը կազմում է հողամասի 28.64%-ը: Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- վերակառուցվող շինության մակերես – 2550քմ,
- նոր կառուցապատվող գրասենյակային շինության մակերես – 3700քմ,
- բարեկարգում՝ 2230քմ, կառուցվող այգու (հանգստյան կենտրոն) մակերես՝ 1350քմ (ընդհանուր մակերեսի 28,64%):

Շինության կոնստրուկտիվ համակարգն իրենից ներկայացնում է երկաթբետոնե հիմնակմախք: Գրասենյակային շինության սենյակների դասավորությունը պայմանավորված է հողամասի դիրքով, հեռավորությունների նորմատիվ պահանջներով, բնական լուսավորության հաշվարկներով: Պատերը նախատեսվում է իրականացնել պեմզաբլոկներով, արտաքին երեսապատումը՝ բազալտե և տուֆե սալերով, ցեմենտբորդով: Ծածկերը երկաթբետոնե միաձույլ սալեր են, միջնորմները՝ պեմզաբլոկ, գիպսաստվարաթուղթ: Տանիքը՝ հարթ-համատեղված, ճկուն փաթեթցային ծածկույթով և կազմակերպված ջրահեռացումով:

Կառուցապատվող համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր՝ ՓԲԸ-ն 2019թվականի հունվարի 24-ին տրված N23065111 պայմանագրի հիման վրա: Գրասենյակային շինության ջերմամատակարարումն իրականացվելու է օդորակիչների և այլ էլեկտրական սարքերի միջոցով:

Ջրօգտագործման ու ջրահեռացման կազմակերպման համար «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրամադրվել է տեխնիկական պայման՝ պայմանագիր N06-0201-11-2, կնքված 2018թվականի դեկտեմբերի 25-ի, համաձայն որի, ներքին ջրամատակարարման ցանցերը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե Մ50-15մմ խողովակներով, արտաքին կոյուղագիծը իրականացվելու է պոլիէթիլենային Մ150-200մմ խողովակներով:

Գրասենյակային շինություններում գազամատակարարում չի նախատեսվում:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են ըստ ժամանակացույցի և օրացուցային գրաֆիկի, որի տևողությունը հաշվարկվել է 33 ամիս, այդ թվում 1.5 ամիս նախապատրաստական փուլ: Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը նախատեսված է իրականացնել շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջրի և արտաձյուղների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի համար կենցաղային կարիքների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է 2647.5մ³/շին.ժամ, որից ջրցանի համար ծախսը կազմի



288մ³/շին.ժամ. կամ 1.2մ³/օր: Շինարարության փուլի ջրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին:

Քանդման աշխատանքներից առաջացած շինադրը՝ 1.200տոննա, համաձայն քանդման թույլտվության՝ կտեղափոխվի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի տարածքում գործող շինարարական թափոնների աղբավայր:

Նոր կառուցվող շինությունների կառուցման ընթացքում հողային աշխատանքների իրականացման արդյունքում նախատեսվում է հողային աշխատանքներ հետևյալ ծավալներով՝ հանվող հողային զանգված՝ 45.000մ³, հետլիցք՝ 12.000մ³, ավելցուկային գրունտ՝ 33.000մ³: Կառուցման և վերակառուցման աշխատանքներից առաջացող հանույթի զանգվածը ընդհանուր կկազմի 46300մ³: Հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային հողային գրունտը՝ 33700մ³ ամբողջությամբ կտեղափոխվի արտոնագրված աղբավայրեր:

Նոր կառուցվող բնակելի համալիրի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխազագերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր: Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է.

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,
- փոշու տարածումը կանխարգելելու նպատակով՝ սորուն նյութերի ժամանակավոր կուտակումների և շինհրապարակի համապատասխան բարձրությամբ թաղանթով ծածկում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգաբերում,
- ծածկված թափքերով բեռնատարներով գրունտի և սորուն նյութերի տեղափոխում,
- որակյալ վառելիքի օգտագործում:

Շրջակա տարածքների պահպանության և վառելիքի կամ քայուղերի հնարավոր արտահոսքերը կանխարգելելու նպատակով շինարարական նյութերի և քայուղերի ժամանակավոր պահեստները նախատեսված են տեղադրել բետոնապատ մակերեսի վրա: Այն տարածքներում, որտեղ կայանելու են շինարարական տեխնիկական և տեխնիկական միջոցները, նախատեսված է պատել ավազով, կամ մանրախճով, անհրաժեշտության դեպքում փոխված ավազը կամ մանրախիճը փոխարինել սորով:



Շինարարության ընթացքում հոսքաջրերի և անձրևաջրերի հեռացումը կատարվելու է կազմակերպված եղանակով՝ հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի կմիացվեն գործող քաղաքային 400մմ հեղեղատար ցանցին: Նույն ցանցով և կհեռացվի շենքի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները: Ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիէթիլենային Մ200-300մմ խողովակներով:

Կառուցապատման ընթացքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ դրանց ազդեցությունը նվազեցնելու նպատակով կառուցապատման հարակից տարածքներում նախատեսված է շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում ցերեկային ժամերին, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգման և կարգաբերման իրականացում: Շինհրապարակի հարևանությամբ նախատեսված է ցուցանակների տեղադրում, ժամանակավոր անցուղիների նախատեսում, երթևեկության կանոնակարգում, շինարարական աշխատանքների մասին հարակից տարածքների բնակչության իրազեկում և այլն:

Մեղմացնող միջոցառումների արժեքը գնահատվել է նախագծային աշխատանքների արժեքի մոտ 1,2%, ջրցանի միջոցառումների համար ծախսերը կկազմեն՝ 192.0 հազ.դրամ, զգուշացնող վահանակների և ցուցանակների գինը՝ 160.0 հազ.դրամ:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատումն իրականացվելու է նախագծման առաջադրանքի պահանջներին և տարածքի համար հետագայում մշակվող տարածքի կանաչապատման նախագծին համապատասխան, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատումը ներառում է սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է թույա, կաղնի, գնդաձև ակացիա, հացենի, թղկի, լացող ուռենի և այլ ծառատեսակներ, ինչպես նաև ծաղկասածիլներ և խոտի սերմ:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի արժանյի սահմաններում:



Փորձաքննական պահանջներ

- Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արմենիա Վայն Գործարան» ՍՊԸ կողմից ներկայացված Կենտրոն վարչական շրջան Իսակովի պողոտա 11 հասցեում նախատեսվող կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Ալեքսանյան